

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2007թ. հուլիսի 2-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգումների բաժնի պետ Գ. Գյուրջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը մրցակցության և պետական աջակցության բնագավառներում» թեմայով աշխատաժողովին,
- ✓ 2007թ. հուլիսի 3-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աջակցություն միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. հուլիսի 6-7-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայկական Ծիրան» առաջին միջազգային համաժողովին,
- ✓ 2007թ. հուլիսի 12-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիային» նվիրված սեմինարին,
- ✓ 2007թ. հուլիսի 26-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի տնտեսությունը 2006 թվականին» տարեկան զեկույցի շնորհանդեսին,
- ✓ 2007թ. հուլիսի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թրաֆիկինգի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման» զեկույցի շուրջ քննարկումներին,
- ✓ 2007թ. օգոստոսի 14-ին և 15-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Գ. Մարտիրոսովան, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգումների բաժնի պետ Գ. Գյուրջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի ազդեցության գնահատման մեթոդաբանությանը՝ շեշտը դնելով «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի վրա» և «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի ֆերմերների վերապատրաստման ծրագրում ըստ տարիների ընդգրկվելիք համայնքների պատահական ընտրության միջոցառում» թեմաներով սեմինարներին,

- ✓ 2007թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Խաչատրյանը մասնակցել են ք. Ադվերանում կայացած «Հարկային եկամուտների կանխատեսում և գնահատում» թեմայով սեմինարին: